ժական դասախօսութիւններ, բացատրութիւններ և փորձնական դասեր (пробные уроки)։

«Մանկավարժական թանգարանը պիտի ունենայ մի ընդարձակ դահլիճ մանկավարժական դասախօսութեանց և փորձնական դասերի համար, մի կամ երկու սենեակ Մանկավարժական գրադարանի համար, մի սենեակ Հոգևոր Ճեմարանի վարժոցի համար, երկու կամ երեք սենեակ դպրոցական իրերի ժողովածուների համար։

«Ճէնքի համար պիտի ծախսուի ոչ աւել քան քսան և հինգ հազար ռուբլի։

«Այս նպատակով դնելով Ձեր տրամադրութեան տակ երեսուն հազար ռուբլի, խնդրում եմ Մանկավարժական Թանգարանը, ի յիշատակ իմ սիրելի որդու, կառուցանելու և վերջնականապէս աւարտելու ու կանոնաւորելու գործը Դուք յանձն առնէք այս 1911 թուի գարնանից սկսած։

«Այս իմ որոշման մասին, յոյս ունեմ, անձամբ կզեկուցանէք Ամենապատիւ Տեղակալ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսին»։

«Արարատ» ամսագրի Խմբագրութեան.

Ա.

Մոսկովաբնակ Տիկին Վարվառէ Քանանեանը նուիրել է Մ. Տաճարին մի փոքր արծաթեայ ոսկեզօծ խաչ, որը Ամենապատիւ Տ. Տեղակալի ամսոյս 7-ի, թ. 1262 գրութեան համաձայն մուծեցի Տաճարի ցուցակում մուտք։

Յայտնում եմ շնորհակալիքս և օրհնութիւնները յարգելի նուիրատուին։

Այս մասին խնդրում եմ հրատարակել Արարատի առաջիկայ համարում։

Մայր Տաճարի Լուսաբարձրագոյն Ղեւոնդ Եպիսկոպոս.

Բ.

Լազարեան ճեմարանի Արեւելեան լեզուաց

ՊԱՏՈՒԱՒՈՐ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

Սորանով տեղեկութիւն է տրւում հասարակութեան, որ իւրաքանչիւր տարի թոշակառու աշակերտների տեղեր քիչ են բացւում ճեմարանում, այն ինչ ուսուցիչների, աստիճանաւորների և պաշտօնեաների որդիք խիստ շատ կան, որոնք ցանկանում են Լազարեանի թոշակով ձրի ուսում ստանալ. այդ պատճառով մեշչանների, չինականների և գիւղացիների որդիք չեն կարող յուսալ ձրիավարժ որդեգիրներ լինելու ճեմարանում:

Պատուաւոր Հոգաբարձու **Իօհան Երամեյիվ—Լազարեւ:**

«Արարատ» դեկտ. ամսագրի մէջ, Երեւանի թեմ. դպրանոցի ուսուցչական կազմի ցաւակցական հեռագիրը ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի մահուան առթիւ, ինչպէս նաև ներկայ լինելու համար ընտրւած ներկայացուցիչների անունները չեն յիշւած: Բայց այս չեն յիշւած Բաքուի գործակալ Տ. Զաւէն վարդապետի ցաւակցական հեռագիրը, և կուլտուրական ընկերութեան կողմից եկած պատգամաւորների անունները: Սոսկ են տպւած Բաքուի պատգամաւորների հետեւեալ անունները.

Տպւած է	պէտք է լինի
Ա. Ս. Մելիքեան	Հ. Ս. Մելիքեան.
Գ. Յ. Տէր Միքայէլեան	Հ. Բ. Տէր Միքայէլեան
Նաջաֆ Կուլի Բէկով	Նաջաֆ Ղուլի Սադիխով.

Ներում ենք խնդրում. պատճառը հանգամանքների բարդումն ու անճարարանքն են եղել:

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Արարատի տարւոյս յունվար ամսատետրում արտատպւել են հետեւեալ խոշոր սխալները.

եր.	տող	վ. սխալ	ուղիղ
24	3	հողածին սրահում	հոգեղէն սրահում
54	1	Բնագաւառագրեղա	Բհագաւառագրեղա